

«Հ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 11/2

5 մարտի 2013թ.

Քննարկվեց «Քարասող» ՍՊԸ 19.02.2013թ. դիմումը «Հ ԿԱ ՊԵԿ Արթիկի ՏՀՏ 21.01.2013թ. թիվ 1008264 ստուգման ակտն անվավեր ճանաչելու վերաբերյալ:

«Հ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը, լսելով «Քարասող» ՍՊԸ ներկայացուցիչների և վերոգրյալ ստուգման ակտը կազմած պաշտոնատար անձի ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ «Քարասող» ՍՊԸ 19.02.2013թ. դիմումի հիման վրա «Հ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ:

Համաձայն «Հ ԿԱ ՊԵԿ նախագահի 30.11.2012թ. թիվ 1008264 հանձնարարագրի «Հ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում «Քարասող» ՍՊԸ-ում կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում 21.01.2013թ-ին կազմվել է թիվ 1008264 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 49.595.891 դրամ:

«Քարասող» ՍՊԸ-ն 19.02.2013թ-ին դիմում է ներկայացրել «Հ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ստուգման ակտն անվավեր ճանաչելու վերաբերյալ: Միևնույն ժամանակ, «Քարասող» ՍՊԸ կողմից ստուգման ակտն անվավեր ճանաչելու վերաբերյալ հայցադիմում է ներկայացվել նաև «Հ վարչական դատարան:

«Հ վարչական դատարանը 27.02.2013թ-ին կայացրել է թիվ ՎԴ-1141/05/13 որոշումը, որի համաձայն «Քարասող» ՍՊԸ-ի ստուգման ակտն անվավեր ճանաչելու վերաբերյալ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» «Հ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի «դ» ենթակետի. «Դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե դատարանի վարույթում գտնվում է միևնույն անձանց միջև, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով գործ»:

Նույն օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն. «Եթե ակտը բողոքարկվել է վարչական և դատական կարգով միաժամանակ, ապա բողոքը ենթակա է դատական քննության, որի դեպքում վարչական մարմնում հարուցված վարույթը կարճվում է»:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» «Հ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի «դ» ենթակետի և 70-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ «Քարասող» ՍՊԸ-ի 19.02.2013թ-ի դիմումի հիման վրա «Հ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» «Հ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

«Քարասող» ՍՊԸ-ի 19.02.2013թ-ին դիմումի հիման վրա «Հ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կարճել:



Հանձնաժողովի նախագահ՝

Տ.ԲԱՐՍԵԴՅԱՆ